Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 4
«ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/4» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

31.08.2026թ.

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝
- Ռոման Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝
- Կարեն Գալոյան
- Գարիկ Բոյաջյան
- Գեորգի Հարությունյան

Քարտուղար՝ Արևիկ Մինասյան

Նիստի օրակարգ (մեկ հարց).

1. Գնման ընթացակարգի հրավերի շրջանակներում ստացված հարցումների վերաբերյալ պարզաբանում տրամադրելու մասին

Նիստի ընթացքում քննարկվեց **«ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/4»** ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հարցումը և հարցման վերաբերյալ պարզաբանման հայտարարությունը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջները՝ հաստատել հրապարակման ենթակա պարզաբանման հայտարությունը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ռ. Արշակյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Կ. Գալոյան

_____ Գ. Բոյաջյան

_____ Գ. Հարությունյան

հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ա. Մինասյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2026 թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն
Ընթացակարգի ծածկագիրը «**ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/4**»

ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կարիքների համար՝ համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/4» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 31.08.2026թ. տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 4՝

Հարգելի գործընկեր ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/4 ծածկագրով գնման ընթացակարգի 6-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է, որ ձեռքբերման ենթակա համակարգիչը պետք է լինի All-in-One տիպի, իսկ սնուցման բլոկի (PSU) հզորությունը՝ առնվազն 550W: Խնդրում ենք պարզաբանել՝ արդյո՞ք նշված «առնվազն 550W PSU» պահանջը համապատասխանում է պատվիրատուի նախատեսած սարքավորման տեխնիկական պահանջին: Հաշվի առնելով, որ All-in-One համակարգիչների տվյալ դասում ներկայումս նման հզորությամբ PSU-ով մոդելների առկայությունը գործնականում սահմանափակ է, խնդրում ենք տեղեկացնել՝ արդյո՞ք տվյալ պահանջը կարող է լինել տեխնիկական վրիպակի հետևանք:

Պարզաբանում N 4՝

«ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/4» գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրի համաձայն անձնական համակարգիչ՝ 1 հատի համար սահմանված է.

«Սնուցման բլոկ՝ առնվազն 550 W» պահանջը պետք է դիտարկել որպես տեխնիկական բնութագիր և այն չի ենթադրում, որ ձեռքբերման ենթակա համակարգիչը պետք է լինի «All-in-One» տիպի»:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/4» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Ա. Մինասյանին:

Հեռախոս՝* 011-54-66-40*:
***Էլեկտրոնային փոստ՝ info@spm.am*:**

«ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/4» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով

31.08.2026թ.